ՖԵՆՅԱ ԵՐՎԱՆԴՅԱՆ
Կառավարում,
բակալավրիատ, 2-րդ կուրս

ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ՎՐԱ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *ուսանողներ, հեռավար կրթություն, ՏՀՏ, մոտիվացիա, բուհ*

Հոդվածում ուսումնասիրվել և վերլուծվել է հեռավար կրթությունը Հայաստանի Հանրապետությունում և դրա ազդեցությունը ուսանողների մոտիվացիայի վրա: Սոցիոլոգիական հարցումների միջոցով ամփոփ ներկայացված են ուսանողների կարծիքներն ու առաջարկությունները հեռավար դասերի վերաբերյալ:

Ներածություն: Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ հեռավար կրթությունը կրթական ծրագրի իրականացման ձև է, որի շրջանակներում անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և ուսուցչի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների ու հեռահաղորդակցության միջոցներով և հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով և դեպքերում՝ որոշակի ժամկետով: ՀՀ Սահմանադրությամբ կարգավորվում են հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները, սահմանվում են դրանց կիրառման դեպքերը[1]:

Հեռավար կրթությունը ՀՀ-ում լայն կիրառություն է ստացել գերազանցապես համավարակից հետո (2020 թ.): Դրա հետևանքով թեմայի վերաբերյալ ուսումնասիրությունները զգալի չեն, և հեռավար կրթությանը վերաբերող խնդիրների լուծումը կարգավորված է մասամբ: Տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) մշակման, կրթության մեջ դրանց ներդրման ու կիրառման հիմնախնդիրները ենթադրում են ծավալուն և խոր ուսումնասիրություն: Այս փաստը մատնանշում է թեմայի արդիականությունը և կարևորությունը:

Գրականության ակնարկ: Մասնագետների մեծ մասի կարծիքով՝ հեռավար ուսուցման զարգացման հիմնական փուլն սկսվեց 1969 թվականին բացված՝ աշխարհում առաջին հեռավար ուսուցման համալսարանի՝ Մեծ Բրիտանիայի Բաց համալսարանի հիմնադրումով: Այն ազդարարեց բաց կրթության դարաշրջանի սկիզբը. տարբեր երկրներում մի շարք բաց համալսարաններ հիմնադրվեցին՝ զգալի թափ հաղորդելով հեռավար ուսուցման տեսական և գործնական հիմքերի զարգացմանը: Համալսարանի անվանումը բացատրվում էր նրա մատչելիությամբ, ինչը պայմանավորված էր ոչ բարձր գնով և լսարանային պարապմունքներին ոչ այնքան հաճախ այցելելու հնարավորությամբ:

Անի Ավետիսյանը (Հայ-ռուսական համալսարան, տ.գ.թ) դիտարկում է. «Առցանց կրթության փորձարկումն ամբողջ աշխարհում թույլ տվեց համավարակի տարածումը կանխելու միջոցառումների շրջանակներում ապահովել կրթության գործընթացի անընդհատությունը: Ստեղծված պայմաններում դա այլընտրանք չունեցող տարբերակն էր՝ անկախ իր արդյունավետությունից:

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142945

Սակայն, դա նաև փորձ էր. առցանց ուսուցման այս ձևաչափի կիրառումը թույլ տվեց հայտնաբերել բոլոր խնդիրներն ու թերությունները, ինչպես նաև ընդգծել ստացիոնար ուսուցման առավելությունները: Հայաստանում և ամբողջ աշխարհում գործող այս ձևաչափը դեռ հեռավար կրթություն չէ. այն զուրկ է հեռավար կրթությանը բնորոշ բովանդակային և տեխնիկական ճկունությունից: Ներկա իր տեսքով առցանց ուսուցումն առաջացրեց որոշ դժգոհություններ, որոնց հիմքում ուսման արդյունավետության նվազումն է»[1]:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի կրթական ծրագրերի ղեկավար Ալվարդ Պողոսյանը, անդրադառնալով հեռավար կրթության ներդրման անհրաժեշտությանն ու հրատապությանը, արձանագրում է. «Կորոնավիրուսի տարածումով պայմանավորված ճգնաժամային իրավիճակը թե՛ ամբողջ աշխարհի, թե՛ Հայաստանի կրթական համակարգի համար դարձավ իսկական մարտահրավեր: ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավարներն անմիջապես հայտարարեցին, որ աշխարհն այսօր առերեսվում է ոչ միայն առողջապահական, այլ նաև կրթական լուրջ ճգնաժամի հետ, որը խորացնելու է առանց այդ էլ գոյություն ունեցող անհավասարությունները և խտրականությունը: Փաստացի, մի այնպիսի իրավիճակ ստեղծվեց, որ առկա ուսուցում այլևս հնավոր չէր իրականացնել: Պետք էր այս խնդրին շատ արագ լուծում տալ և ապահովել յուրաքանչյուր աշակերտի կրթության շարունակականությունն այլընտրանքային մոտեցումներով: Այստեղ օգնության եկան տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները: Օգնեց նաև այն, որ Հայաստանում վերջին 10 տարիներին ստեղծվել էին բավականաչափ ռեսուրսներ, ինչպես ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության տակ գտնվող Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ), այնպես էլ ոչ պետական կազմակերպությունների և անհատների կողմից»:

Խաչատուր Բեզիրջյանը, Վաղարշակ Խաչատրյանը, Գայանե Հովհաննիսյանը, Սիմոն Բաբայանը «Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածուում», անդրադառնալով հեռավար կրթության ներդրման անհրաժեշտությանը, նշում են. «Հեռավար ուսուցման ներդրումը պայմանավորված է որակյալ, զանգվածային և անհատականացված կրթություն ապահովելու անհրաժեշտությամբ: Գոյություն ունեցող ուսուցման ձևերը տնտեսական և կազմակերպչական տեսանկյունից թույլ չեն տալիս գործնականում նման կրթություն ապահովել, սակայն հեռավար ուսուցումը, որը հիմնված է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների լայնածավալ կիրառման վրա, լուծում է այդ խնդիրը: Հեռավար ուսուցումը կրթություն ստանալու որակապես նոր ձև է, որն առաջացել է XX դարի վերջում՝ շնորհիվ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների: Գիտական տեսանկյունից կրթություն ստանալու այս ձևն ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում, քան հեռակա կրթությունը: Այն չի համարվում հեռակա ուսուցման կատարելագործված ձև: Հեռավար ուսուցումը համակարգված ուսուցման ձև է, որի դեպքում անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և դասախոսի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով: Հեռավար ուսուցման նպատակը բարձրագույն մասնագիտական կրթական հաս-

[1] Ա. Ավետիսյան, Հեռավար կրթությունը Հայաստանում: Մարտահրավերներ ու հնարավորություններ (Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան):

տատությունների սովորողներին հիմնական և լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագրեր յուրացնելու հնարավորություն ընձեռելն է անմիջապես բնակության կամ ժամանակավոր գտնվելու վայրում»[1]:

Պետք է նշել, որ ՏՀՏ կիրառմամբ կրթության համակարգի արդյունավետության և որակի բարձրացման, կրթության ոլորտում ՏՀՏ կիրառման օրենսդրանորմատիվային հենքի կատարելագործման, համակարգի կառավարման և գործընթացի կազմակերպման արդյունավետ կառուցակարգերի կիրառման տեսամեթոդական խնդիրները դեռևս բավարար չափով հետազոտված չեն:

Մեթոդաբանություն: Հեռավար կրթության ազդեցությունն ուսանողների մոտիվացիայի վրա ուսումնասիրելու նպատակով օգտագործվել են առաջնային և երկրորդային տվյալներ: Առաջնային տվյալներն ստանալու համար անցկացվել է սոցիոլոգիական հարցում: Հեռավար կրթության արդյունավետությունը գնահատելու նպատակով հարցում է անցկացվել բուհերի և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների շրջանում: Երկրորդային տվյալների ստացման համար օգտագործվել է փաստաթղթերի վերլուծության մեթոդը, որի համար հիմնական աղբյուր են հանդիսացել ինչպես տպագիր փաստաթղթերը, այնպես էլ էլեկտրոնային նյութերը (թերթեր, արձանագրություններ, պաշտոնական փաստաթղթեր):

Հետազոտության արդյունքներ և քննարկում: Ըստ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքի 2020-2021 թթ. տվյալների՝ ՀՀ-ում գործում է 55 բուհ, որտեղ սովորում է 68987 ուսանող[2]:

Պետք է նշել, որ մինչ համավարակը կային որոշ հաստատություններ, որոնք իրականացնում էին հեռավար դասեր, բայց 2020 թ. մարտից բոլոր հաստատություններն ստիպված եղան անցնել հեռավար կրթության: Փաստ է, որ հեռավար կրթությունը, ունենալով իր թերություններն ու առավելությունները, մեծ ազդեցություն է թողնում ուսանողների մոտիվացիայի վրա:

Հաշվի առնելով ընտրված թեմայի առանձնահատկությունները և տվյալների բացակայությունը՝ հետազոտության արդյունքում որպես մեթոդ օգտագործվել է սոցիոլոգիական հարցումը, որը պատկերացում է տալիս, թե ինչպես են ուսանողները վերաբերվում հեռավար դասերին, և թե ինչը նրանց կօգնի մոտիվացվել:

Որպես թիրախային խումբ են ընտրվել ուսանողները, իսկ հարցման եղանակ՝ առցանց, անանուն հարցումը (հիմնականում՝ սոցիալական ցանցերի միջոցով):

Հարցմանը մասնակցել է 191 ուսանող՝ 149 աղջիկ և 42 տղա:

---

[1] «Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու», ՀՀ պետական կառավարման ակադեմիա,ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն /Խաչատուր Բեզիրջյան, Վաղարշակ Խաչատրյան, Գայանե Հովհաննիսյան, Սիմոն Բաբայան, Եր., 2017:

[2] https://armstat.am/file/article/sv_03_21a_5170.pdf



Գծապատկեր 1. ***Հարցվածների սեռատարիքային կազմը***

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, մասնակիցների մեջ գերակշռում է աղջիկների թվաքանակը, ինչը սպասելի էր, քանի որ տղաները հարցումների ընթացքում ավելի պասիվ են:

Այն հարցին, թե ինչպես են գնահատում իրենց ուսումնական հաստատության տրամադրած կրթության որակը մինչ համավարակը, մասնակիցները պատասխանել են հետևյալ կերպ՝



Գծապատկեր 2. ***Ուսումնական հաստատության տրամադրած կրթության որակը մինչ համավարակը՝ ըստ ուսանողների***

Հասկանալու համար, թե ուսանողներն ինչպիսի մասնակցություն են ցուցաբերել հեռավար դասապրոցեսին, նախատեսել էինք համապատասխան հարց: Եվ ըստ այդմ՝ այն հարցին, թե ինչպես են մասնակցել հեռավար դասերին, մասնակիցները պատասխանել են հետևյալ կերպ՝



Գծապատկեր 3. ***Ուսանողների մասնակցությունը հեռավար դասերին***

Հարցվողների մեծամասնությունը հեռավար դասերի արդյունավետությունը՝ ըստ դասախոսների հեռավար դասավանդման պատրաստվածության, ըստ նյութերի հասանելիության, ուսանողների հանդեպ անհատական մոտեցման և ըստ ուսանողների մասնակցության, գնահատել է նորմալ: Հետևյալ գործոններով էլ հենց պայմանավորված է հեռավար դասերի անարդյունավետությունը:

Ըստ մասնակիցների մեծամասնության՝ հեռավար կրթության որակի բարելավմանը կարող է նպաստել դասախոսների կողմից դասավանդման մեթոդների փոփոխությունը:

Այլ պատասխանների շարքում են՝

- տեսախցիկի կիրառումը լինի ազատ,
- դասաժամերը փոփոխվեն,
- տեսախցիկի կիրառումը լինի պարտադիր և՛ դասախոսություններին, և՛ գործնական պարապմունքներին,
- ոչինչ չի կարող նպաստել,
- ուսանողների արդար մոտեցումը դասապրոցեսին,
- գերարագ ինտերնետը:

Հարցին, թե ինչը կնպաստեր, որ ուսանողները ավելի ակտիվ մասնակցեին հեռավար դասերին, մասնակիցները նշել են՝

- խստությունը,
- տեսախցիկների պարտադիր կիրառումը բոլորի համար,
- ոչինչ,
- անհատական մոտեցումը,
- դասախոսի կողմից նոր և արդյունավետ մեթոդների կիրառումը,
- դասաժամերի փոփոխությունը,
- տեսախցիկի ոչ պարտադիր կիրառումը,
- անխափան կապը,
- ցանկությունը, մոտիվացիան:

Մասնակիցները նշել են հեռավար կրթության հետևյալ առավելությունները և թերությունները՝

Հեռավար կրթության առավելությունները	*Հեռավար կրթության թերությունները*
• գումարի և ժամանակի խնայում • նյութերի հասանելիություն և ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառում • վատառողջ լինելու ժամանակ դասապրոցեսին մասնակցելու հնարավորություն • ժամանակի արդյունավետ կառավարում • առավելություններ չկան • հնարավոր է բոլոր վայրերից միանալ դասերին • այն ուսանողները, որոնք բնակվում են մարզում, ստիպված չեն տեղափոխվել քաղաք	• մարդկային շփման բացակայություն • դասապրոցեսի անարդյունավետություն • տեխնիկական խնդիրներ • ուսանողների կողմից ոչ արդար մոտեցում, անազնվություն • տեսողության վատթարացում • ուսանողների գիտելիքների և կարողությունների ոչ ռեալ գնահատում • մոտիվացիայի պակաս • ուսանողների մասնակցության ցածր մակարդակ • համապատասխան տեխնիկայի բացակայություն • հետադարձ կապի բացակայություն

Հետազոտության արդյունքները վկայում են, որ մասնակիցների մեծամասնության մոտիվացիայի վրա ազդում է դասերի անարդյունավետ լինելը, որի հիմքում հետևյալ հիմնական գործոններն են՝

1. ուսանողների ոչ ազնիվ և ոչ պատասխանատու վերաբերմունքը,
2. դասախոսների՝ հեռավար դասավանդման պատրաստվածության ցածր մակարդակը:

Եզրակացություն: Փաստ է, որ կրթության և՛ հեռավար, և՛ առկա ձևերը ունեն իրենց առավելություններն ու թերությունները: Միևնույն ժամանակ, թերությունները հնարավոր չէ ամբողջովին վերացնել, սակայն հնարավոր է նվազեցնել դրանց ազդեցությունը: Ինչպես ցույց է տալիս մեր կողմից կատարված ուսումնասիրությունը, հեռավար կրթությունն ազդում է ուսումնական գործընթացի արդյունավետության վրա, ինչը հնարավոր է բարձրացնել՝ ազդելով ուսանողների մոտիվացիայի վրա:

Այժմ անդրադառնանք այն 2 հիմնական գործոններին, որոնք, ըստ հետազոտության արդյունքների, հեռավար դասերի անարդյունավետության պատառ են և բացասաբար են անդրադառնում ուսանողների մոտիվացիայի վրա:

Առաջին գործոնը ուսանողների անտարբեր, ոչ ազնիվ և ոչ պատասխանատու վերաբերմունքն է: Կարծում ենք՝ առհասարակ մեր խնդիրների հիմնական պատճառը մարդկանց անտարբերությունն է, և, ցավոք, դրա դեմ պայքարն այդքան էլ դյուրին և իրատեսական չէ: Միևնույն ժամանակ, ուսանողների ոչ հասուն վերաբերմունքն է խոչընդոտում կրթական ծառայություններից արդյունավետ կերպով օգտվելուն: Այս առումով, պետք է ընդգծել բարձրագույն կրթություն և դիպլոմ ստանալուն որպես պարտադիր պայմանի վերաբերվելը, որը թուլացնում է կրթական ծառայություններից լիարժեք օգտվելու մոտիվացիան:

Երկրորդ գործոնը դասախոսների՝ հեռավար դասավանդման պատրաստվածության ցածր մակարդակն է, որը պայմանավորված է նրանց տարիքով և ոչ համապատասխան վերապատրաստմամբ: Մեծահասակ դասախոսները հիմնականում դժվարանում են կիրառել դասընթացի վարման նոր տեխնիկական մեթոդներ: Իսկ ավելի ցավալին այն է, որ ոչ պատշաճ վերապատրաստումը վերաբերում է նաև երիտասարդ դասախոսներին: Կարծում ենք՝ համավարակը ուրույն դաս պետք է հանդիսանա թե՛ բուհական, թե՛ հանրա-

կրթական մակարդակներում դասախոսների և ուսուցիչների վերապատրաստման համար: Փաստ է, որ այս ֆորս-մաժորային իրավիճակը աշխարհում, ինչպես նաև Հայաստանում արագ և աննախադեպ պատրաստվածություն պահանջեց բոլորից:

Թվարկված գործոնները կախված են և՛ ուսանողներից, և՛ դասախոսներից: Սակայն, քանի որ հարցումն անցկացվել է միայն ուսանողների շրջանում, ապա դասախոսների մոտեցումներին չենք կարող անդրադառնալ:

Մեր կարծիքով՝ ուսանողների մոտիվացիայի բարձրացման լավագույն միջոց կարող է հանդիսանալ բուհերում ուսանողների շրջանում հեռավար կրթության վերաբերյալ դասընթացների կազմակերպումը: Դասընթացները կարող են նախաձեռնել հենց ուսանողները: Վերջիններիս դրանք կօգնեն՝

- բարձրաձայնել իրենց հուզող հարցերը և ստանալ պատասխաններ,
- իրազեկված լինել,
- մոտիվացվել,
- առաջացած խնդիրների լուծման համար այլընտրանքային և արդյունավետ լուծումներ առաջարկել:

Այս ամենով հանդերձ, կարևոր է նշել, որ արծարծված հիմնախնդրում մեծ դերակատարություն ունի մարդկային գործոնը: Այսինքն, վերոբերյալ միջոցառումների կիրառումը արդյունավետ կլինի միայն այն դեպքում, երբ ուսանողների և դասախոսների կողմից դրսևորվի պատշաճ, պատասխանատու և պատրաստակամ վերաբերմունք:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն:
2. Ավետիսյան Ա., Հեռավար կրթությունը Հայաստանում: Մարտահրավերներ ու հնարավորություններ (Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան):
3. «Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու» /ՀՀ պետական կառավարման ակադեմիա, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն,Խաչատուր Բեզիրջյան, Վաղարշակ Խաչատրյան, Գայանե Հովհաննիսյան, Սիմոն Բաբայան, Եր., 2017:
4. Использование видео в дистанционном обучении, Для преподавателей и учителей, Издание второе/ Б. И. Крук.
5. Майкл А., E-Learning. Как сделать электронное обучение понятным, качественным и доступным.
6. Избранные главы теории и практики дистанционного обучения, Б. И. Крук.
7. Министерство образования и науки Российской Федерации ФГБОУ ВО «Новосибирский государственный педагогический университет», Современное дистанционное образование
8. Басев И. Н., Эффективное использование педагогических программных средств в процессе обучения студентов вуза [Электронный ресурс] / Басев, Игорь Николаевич, Некрасова, Ирина Ивановна, Сартаков, Игорь Витальевич, И. Н. Басев, И. И. Некрасова, И. В. Сартаков, Новосиб. гос. пед. ун-т, Новосибирск, НГПУ, 2013.
9. Тихомирова Е., Живое обучение. Что такое e-learning и как заставить его работать.
10. www.arlis.am
11. www.escs.am
12. www.armstat.am
13. https://armstat.am/file/article/sv_03_21a_5170.pdf
14. www.unicef.org/armenia/en
15. www.ktak.am
16. www.isec.am

ФЕНЯ ЕРВАНДЯН
Менеджмент, бакалавриат, 2-й курс

ВЛИЯНИЕ ДИСТАНЦИОННОГО ОБУЧЕНИЯ НА МОТИВАЦИЮ СТУДЕНТОВ В АРМЕНИИ

Ключевые слова: *студенты, ИКТ, дистанционное обучение, мотивация, вуз*

В статье исследуется и анализируется дистанционное образование в Республике Армении и его влияние на мотивацию учащихся. Социологические опросы обобщают мнения и предложения студентов по дистанционному обучению.

FENYA YERVANDYAN
Management, Bachelor's Degree, 2nd Year

THE IMPACT OF DISTANCE EDUCATION ON STUDENT MOTIVATION IN ARMENIA

Keywords: *students, distance education, motivation, university*

The article studies and analyzes distance education in the Republic of Armenia and its impact on student motivation. Sociological surveys summarize students' opinions and suggestions on distance learning.

ՄԱՐԻՆԵ ԹԱՄԵՅԱՆ
Հաշվապահական հաշվառում և հարկում, բակալավրիատ, 4-րդ կուրս

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. *ֆինանսական կայունության ցուցանիշներ, ՀՀ բանկային համակարգ, ՀՀ կենտրոնական բանկ, մակրոպրուդենցիալ կարգավորում, ռիսկեր, տնտեսական նորմատիվներ*

Հոդվածում դիտարկվել են «ֆինանսական կայունություն» հասկացությունը, դրա դերը ՀՀ բանկային համակարգում, բանկերի ֆինանսական կայունության գնահատման համար օգտագործվող ցուցանիշները և ՀՀ ԿԲ-ի կողմից ֆինանսական կայունության ապահովման համար կիրառվող քաղաքականությունը: Անդրադարձ է կատարվել ՀՀ բանկային համակարգի 2020 թ. ֆինանսական կայունությանը՝ կապված համավարակի և երկրում տիրող պատերազմական իրավիճակի հետ:

Ներածություն: Ֆինանսական կայունությունը ֆինանսական, մակրոտնտեսական և այլ պայմանների համադրությունն է, որի դեպքում ֆինանսական հաստատությունները, շուկաները և դրանց ենթակառուցվածքները կարող են դիմակայել հնարավոր մարտահրավերներին, ցնցումներին ու անհավասարակշռություններին՝ նվազեցնելով ֆինանսական միջնորդության գործառույթների ընդհատման հավանականությունը: Ֆինանսական կայունությունը բնորոշելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, որ ֆինանսական կայունություն կարող է առաջանալ ոչ միայն ֆինանսական համակարգի ներքին գործընթացների խաթարման, այլ նաև խոշոր փոխատուների ու պարտատերերի հետ կապված խնդիրների, տնտեսական քաղաքականության փոփոխության, մակրոտնտեսական անբարենպաստ զարգացումների դեպքում: